Հաստատում եմ՝
Տնօրեն ________ Ա.Թամրազյան__
Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ
Ռ. Թամամյան

_____ սեպտեմբերի 2023թ.

# ԲՆԱԳԻՏԱԿԱՆ
# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ուսումնական տարի
Թեղուտի միջն դպրոց

Մասնախմբի ղեկավար՝ ԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բնագիտական մեթոդական մանախմբի առարկաների կարևորությունն ու դասավանդումը դպրոցում:

Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը` ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր` ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:

Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները` հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով :

Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել ` ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների` ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացում

Դպրոցի սովորողներին, առաջին հերթին ավագ դպրոցի, նախապատրաստել դպրոցականների միջազգային և առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին` նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:

Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

2023-2024 ուսումնական տարվա
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատ. պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | մեթոդմիավորման աշխատանքների պլանավորում և կազմակերպում | 2023թ սեպտեմբեր | Մասնախմբի ղեկավար | |
| 2 | Մասնախմբի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում | 2023թ սեպտեմբեր | Մասնախմբի ղեկավար | |
| 3 | Առարկայական թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում,9-րդ և 12-րդ դասարանների անցում նոր չափորոշչին | 2023թ. սեպտեմբեր | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 4 | Բնագիտական առարկաների փորձնական չափորոշչի և ծրագրերի իրագործում | Տարվա ընթացքում | ուսուցիչներ | |
| 5 | Մեթոդմիավորման ամենամսյա նիստերի կազմակերպում և անցկացում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 6 | Ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | Ծանոթացնել մասնախմբի անդամներին ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչներին և դրանց շնորհման չափանիշներին, մղելով նրանց տարակարգ ստանալուն: | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 8 | Ուսումնական կաբինետների կահավորում և հարստացում | Ուստարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 9 | Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում, ընդհանրացում և ներդրում պրակտիկ աշխատանքում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 10 | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, ընթերցումներ | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 11 | Սահմանված կարգով կազմակերպել փորձարկվող 5-րդ և 7-րդ դասարանների դասագրքերի փորձաքննություն | 2023 օգոստոս | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 12 | Մանկավարժական | Ուստարվա | Փոխտնօրեն, | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ներդրման նպատակով ՝ փոխադարձ դասալսումներ կազմակերպել | ընթացքում | մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 13 | Ուսուցիչներին նախապատրաստել հերթական ատեստավորմանը | Առաջին կիսամյակի ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 14 | Դասավանդման մեթոդների կատարելագործման, համագործակցային ուսուցման և նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով՝ բաց դասեր կազմակերպել | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 15 | Առարկայական շաբաթների կազմակերպում և անցկացում | Երկրորդ կիսամյակի ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 16 | Համացանցի www.armedu.am, www.aniedu.am կայքէջերի, մասնագիտական ամսագրերի և թերթերի նյութերի ուսումնասիրում և քննարկում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 17 | Ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում սովորողների ԳԿՀ մակարդակը ուսումնասիրելու նպատակով քննությոոոունների | 2024 թ. մայիսին | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | անցկացում | | | |
| 18 | Փոխադարձ դասալսումների կազմակերպում և քննարկում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 19 | Ուսումնական ծրագրերի կատարման ստուգում | 2023թ. դեկտեմբեր 2024թ. մայիս | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 20 | Դպրոցական օլիմպիադաների, մրցույթների կազմակերպում | Առաջին կիսամյակի ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 21 | Նախագծային աշխատանքների անցկացում | Տարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար | |
| 22 | Առարկայական վիկտորինաների կազմակերպում | Տարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար,անդամներ | |
| 23 | Բնագիտական առարկաների հանրապետական օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպում և անցկացում | Առաջին կիսամյակի ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 24 | Ապահովել ուսուցիչների մասնակցությունը ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից անցկացվող մենթորական սեմինարներին | Ուստարվա ընթացքում | Ուսուցիչներ | |
| 25 | Մշտապես տեղեկացված լինել ԿԶՆԱԿ-ի նորություններին | Տարվա ընթացքում | Ուսուցիչներ | |

Տեղեկություններ Թեղուտի միջն դպրոցի 2023-2024 ուստարվա բնագիտական առարկաների մեթոդական միավորման կազմի մասին

| № | Ազգանունը, անունը | Կրթությունը | Դասավանդ. առարկան | Դասարաններ | Տարակարգ | Կառավարման խորհրդի անդամ | Մանկ. խորհրդի անդամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Անուշ Գրիգորյան | բարձր | քիմիա,կենսաբ. | 7-12 | - | ոչ | այո |
| 2. | Թամամյան Ռայա | բարձր | Կենսաբ,բնություն | 5,10.11 | - | ոչ | այո |
| 3. | Հարությունյան Սոնյա | բարձր | Աշխարհ,բնություն | 6-12 | 2-րդ | ոչ | այո |
| 4. | Անանյան Քրիստինե | բարձր | Ֆիզիկա,բնագիտություն | 7-10 | - | ոչ | այո |